ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«21» հունվարի 2025 թ. № 70 - Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի N614-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 21-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի ձևը հաստատելու մասին» N614-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ լրացումները՝

1) հրամանի հավելվածով հաստատված ձևում «Դեբետային մնացորդ» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ «Փոխհատուցվող գումարի մնացորդը»,

2) հրամանի հավելվածով հաստատված ձևի «Ծանոթություն» բաժինը լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Փոխհատուցվող գումարի մնացորդ» սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն

պետական բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարի կամ օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ռոյալթիի գումարի կամ օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան սոցիալական ծախսերի արդյունքում պետական բյուջեից փոխհատուցման ենթակա եկամտային հարկի գումարի մնացորդը:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

1/21/2025

X

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ